

ՀԵՂԻՆԷ

Վ. Է. Պ.

Տ. ԻՆ Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Նորոգումներն է)

XXIII

Նոր տարու երրորդ օրն էր։ Իշխանուհի Նակունին՝ բազմաթիւ ալցեցելու թիւններէց յոգնած՝ իւր տանը հիւրասենեակում թուղթ էր խաղում մի ծանօթ կնոջ հետ։

— Ոչ մի բան ինձ այնպէս չի հանգստացնում ինչպէս բէզիկ խաղալը, — դարձաւ նա դէպի շեղինէն, որ կանգնած էր նրա կողքին գլխարկն ու վերարկուն ձեռքին։

Դու, ինչպէս տեսնում եմ, տեղ ես գնում։

— Այո, գնում եմ Սոֆիա Նակովլենայի մօտ։

— Դու էլ համայն երգեմք բաներ կ'ասես հա՛, հոգիս։

Այդ ինչ Սոֆիա Նակովլենա է։

— Տիկին Ասատուրովա։ Միթէ ծանօթ չէք նորա հետ։

— Ո՛չ, արհամարհանքով պատասխանեց իշխանուհին։

Ջարմանում եմ, խա՛չը, ինչպէս չեմ կարողանում թողնել այդ սովորութիւնդ, որ ում հետ պատահի ծանօթանում ես։ Ախ, մարիա՛ժ ունեմ, քիչ էր մնում չը գրէի։

Ոգևորւելով լաւ խաղաթղթերով, իշխանուհին բոլորովին գրաււեց խաղով և չը նկատեց, որ Հեղինէն դուրս գնաց։

Երեկոյեան ժամի իննին մօտ կը լինէր, որ Հեղինէն վերադարձաւ տուն։

Սրահում կատարող իրարանցումից նա հասկացաւ, որ քեռակինը հիստերիկա է եղել։ Նա շտապով դիմեց գէպի ննջարանը, բայց դահլիճովն անցնելիս յանկարծ պատահեց Ասունուն։

Ասունին վախեցած նայում էր չորս կողմը։

— Ալեքսանդր Վասիլիչ, բարեւ, հազար բարի, սաստիկ զարմացած և ուրախացած բացականչեց Հեղինէն։

Այս ո՞ր խաչիցն է, որ այստեղ էք, ե՞րբ էք եկել։

— Երկու ժամ հազիւ լինի, որ եկել եմ։ Պաշտօնս փոխել են այստեղ։

— Իսկ այստեղ ի՛նչ է պատահել, չէ՞ք իմանում։

— Իշխանուհուն նամակ էի բերել Միխայիլ Պետրովիչից։ Նայելով այն ներգործութեանը, որ... այդ նամակը ունեցաւ ձեր քեռականոջ վրայ...

— Հա, հա, հասկացայ բանն ինչումն է, ընդհատեց նորա խօսքը Հեղինէն։ Աւելի լաւ. թող վերջապէս ամեն բան բացւի։

— Հեղինէ, — լսեց իշխանուհու զիւ ձայնը։

Նա վազեց քեռականոջ մօտ, իսկ Ասունին, այլ ևս անյարմար համարելով իւր այնտեղ մնալը, գնաց տուն։

— Այս ինչե՛ր է գրում Միքայէլը քո մասին։ Ճի՞շտ է։ Զես զղջում արածներիդ վրայ։

Հեղինէն բացասաբար շարժեց գլուխը։

— Ինչո՞ւ էիր դու ինձ խաբում։ Առ, կարդա նամակը. այնքան զգացմունքով գրւած, որ առանց արտասուքի չի կարելի կարդալ։

Իշխանուհին խորը հոգոց քաշեց ու թաշկինակը սեղմեց աչքերին։

— Քեռակին ջան, թողէք այդ հարցը. ձեր սիրտը դուր անող մի նեղացնէք. ես ուրիշ տեսակ վարւել չէի կարող։

— Այ քեղ խօսք։ Զէ որ դրանով համ ինքդ խաղք կը լինես,

համ էլ ամբողջ ազգութակդ խայտառակ կ'անես: Խեղդի գլուխդ հաւաքիր, ամօթ ունեցիր, — գոռում էր իշխանուհին:

Երբ որ իշխանուհին տեսաւ, որ ոչ աղաչանքով, ոչ արտասուքով բան չի դուրս գալիս, մի քանի օր անցնելուց յետոյ կանչեց իւր մօտ Հեղինէին ու սաստիկ խիստ կերպով ասաց.

Ես չեմ ուզում, որ քեռուդ անարատ անունը խայտառակի: Եթէ մինչև վաղը խելքի չը գաս, էլ իմ աչքիս չ'երևաս:

— Ինձ համար շատ ծանր է ձեր սիրտը ցաւացնել, բայց...

— Այսուհետև էլ դու իմ ազգականը չես, չոր-չոր կտրեց նորա խօսքը իշխանուհին:

Էլ քո ոտքը իմ տան շէմքը չը տեսնի:

Հեղինէն մի րոպէի չափ այնպիսի դրութեան մէջ ընկաւ, կարծես քարացած լինէր, բայց այդ շուտով անցաւ և նա պառտասխանեց հանգիստ կերպով.

— Այս րոպէին կը կատարեմ ձեր ցանկութիւնը:

— Լսիր Հեղինէ, աւելի մեղմ ձայնով սկսեց խօսել իշխանուհին. դու բոլորովին որբ էիր, ես քեզ իմ տունս ընդունեցի, պահեցի, մեծացրեցի, ուսում տուցի: հարազատ մօրից աւելի սիրեցի, փաշտայեցի, իսկ դու այժմ ոչ մի բանի տեղ չես դնում իմ խօսքս: Այս էր լինելու իմ բոլոր երախտիքներին վարձատրութիւնը: Ես անշորհակալ եմ, շատ լաւ ես անում: Գոնէ քեռուդ խնայէիր ու ծերութեան օրը խեղճին խաղք ու խայտառակ չ'անէիր:

Օ՜հ, սիրտս գնում է, հառաչեց իշխանուհին քթին մօտեցնելով դեղի սրակը:

Հեղինէն խնամքով բարձրացրեց բարձը և շալով ծածկեց քեռակնոջը, բայց նա անհամբեր շարժումով մերժեց նորա ծառայութիւնները:

Հեղինէն տխուր-տրտում դուրս եկաւ ննջարանից հանդարտ քայլերով:

Հետևեալ օրը նա Ասունու օգնութեամբ գտաւ ու վարձեց երկու սենեակից բաղկացած մի բնակարան և հէնց նոյն օրը քաշեց այնտեղ իւր երեխայի ու գայեակի հետ:

Հիմա որ Հեղինէն ազատ շունչ քաշեց և երևում էր, որ գոհ էր իւր դրութիւնից, չը նայելով այդ դրութեան անորոշութեանը:

Մի որ և է պարապմունք գտնելու և առհասարակ ապագայի մասին դեռ չէր մտածում Հեղինէն: Ակղբի օրերը նորա միտքը ամբողջապէս զբաղւած էր անցեալով և ներկայ դրութեան նորութեամբ:

Մինչ այդ՝ Ամիրանովից ստացւում էր նամակ նամակի յետևից, որոնցով նա աշխատում էր համոզել կնոջը հաշտել իւր հետ:

Հեղինէն ամենևին չէր կակղում և բացէ ի բաց հրաժարւում էր այն փողերից, որ մարդը առաջարկում էր նրան ապրուստի համար:

Ասունին շուտ-շուտ գնում-գալիս էր Հեղինէի մօտ և առհասարակ շատ հետաքրքրւում էր նորա դրութեամբ: Իսկապէս ասած, դէպի Հեղինէն զգացած բարեկամութիւնն էր միակ պատճառը, որ Ասունին համաձայնել էր հեռանալ Թ.-սից, ուր նորա համար չափազանց ուրախ էր անցնում կեանքը, և գալ Պետտիգորսկ, ուր նա կարող էր շատ բանում օգնել Հեղինէին: Այդ բանը Հեղինէի սկի մտքովն էլ չէր անցնում:

Մի օր Ասունին Հեղինէի հետ խօսելիս հարցրեց, թէ արդեօք լաւ մտածե՞լ է նա իւր ապագայի մասին: Հեղինէն այդ օրը այնպիսի լաւ տրամադրութեան մէջ էր, որ ուշադրութիւն չը դարձրեց Ասունու տւած հարցի լուրջ եղանակի վրայ:

— Ի՞նչ էք մտադիր անելու, տիկին Հեղինէ:

— Ճիշտ որ, փողերս վերջանալու վրայ են. շոտ լաւ էք անում, Ալեքսանդր Վասիլիչ, որ ուշադրութիւնս դարձնում էք այդ բանի վերայ:

Այդ ասելով Հեղինէն պարզ սրտով ծիծաղեց:

— Գիտեմ, տիկին Հեղինէ, որ դուք նման չէք մեր երիտասարդութեան այն մասին, որ ոգևորւում է, բայց երբէք չի աշխատում լուրջ կերպով իրագործել իւր այդ ձգտումը, սակայն...

Այդ խօսքի վրայ Ասունին կանգ առաւ. կարծես խօսքը դէմ առաւ բգումը. նորա ձայնի մէջ լսւում էր զսպած կսկիծ:

Զգացւած բարեկամի կարեկցութիւնից Հեղինէն իւր աթոռը աւելի մօտեցրեց նրան և երախտագիտական հայեացք զցելով նորա վերայ, ասաց.

— Ե, Ալեքսանդր Վասիլիչ, չը պէտք է այգպէս յուսահատուել, աշխարհս միայն չար մարդիկներով չի լցւած: Միթէ ինձ համար մի գործ չի գտնւիլ:

Ասունին ուզում էր մի կերպ հասկացնել Հեղինէին, որ հասարակութիւնը նորա բացառիկ դրութեանը շատ թշնամաբար է վերաբերում և, հազիւ թէ գտնւի մի մարդ այդ հասարակութիւնից, որ նրան այժմ համակրի, բայց Հեղինէի դէմքը այնպէս փայլում էր յոյսի արտայայտութեամբ, որ նա սիրտ չ'արեց հիասթափեցնել նրան և այդ պատճառով լռեց:

Հեղինէն ուշադրութեամբ նայեց Ասունու երեսին և, կարծես գուշակելով նորա մտքերը, ասաց.

— Դուք այժմ մտածում էք, Ալէքսանդր Վասիլիչ, թէ որքան զժար է կնոջ համար չ'ընկճել հազար ու մի խոշորոտներից, մարդկանց արականութիւնից և այն նախապաշարմունքներից, որոնցով խմորած է մեր հասարակութիւնը և որոնք թոյլ չեն տալիս, որ կանայք ազատ շունչ քաշեն ու իրանց աշխատանքով, ծանր աշխատանքով անկախութիւն ձեռք բերեն: Լը՞, ճիշդ գուշակեցի ձեր մտքերը:

Ասունին տխուր գլխով արեց և մտածեց, թէ որքան բախտաւոր կարող էր լինել Հեղինէն Սահառունու հետ, մինչդեռ այժմ ով գիտէ որքան անարգանքների կարող է ենթարկւել նա:

— Ինչո՞ւ այդպէս սխրեցիք, Ալէքսանդր Վասիլիչ: Ես սովորեւ եմ միշտ ձեզ ուրախ ու ասող-խօսող տեսնել:

Ասէք, ինդրեմ, շատ ժամանակ է, որ Գէօրգի Ալէքսանդրովիչից տեղեկութիւն չունէք:

— Երէկ նրանից նամակ ստացայ:

Հեղինէն ուրախացաւ և մի քիչ յանդիմանորէն նայեց նորա վերայ:

— Ի՞նչ է գրում:

— Կ'ուզէք կարդացէք:

— Կարելի՞ է. տէք տեսնեմ, աշխուժով ասաց Հեղինէն ու Ասունու ձեռքից խլեց նամակը:

Նամակը ամբողջապէս Հեղինէի մասին էր:

Հեղինէն կարդալիս մէկ լաց էր լինում, մէկ ծիծաղում էր: Այդ լացն ու ծիծաղը բախտաւորութեան լաց ու ծիծաղ էին, բախտաւորութեան, որի պատճառը Սահառունու սէրն էր:

— Կ'ուզէք պահեցէք այդ նամակը ձեզ մօտ, մի քիչ տատանւելուց յետոյ ասաց Ասունին:

Հեղինէն չը պատեց, որ Ասունին կրկնի իւր առաջարկութիւնը և մի քիչ շփոթեցնով նամակը դրեց գրպանը ու մտքի հետ ընկաւ: Ասունին լուռ նայում էր Հեղինէին և հրճւում:

— Ինչ էք կարծում, Երկին Հեղինէ, լաւ չի լինիլ, որ Գէորգին իմաց տամ ձեր այժմեան դրութիւնը:

— Ձէ, չէ, այդպիսի բան չ'անէք: Եթէ ես կարողանայի գնալ նորա մօտ, այն ժամանակ ուրիշ է, բայց այժմ...

Այդ րոպէին դրան շէմքին երեւաց դայեակը երեխան գրկին:

Այ, սա է ձեռք ու ոտքս կապում, աւելցրեց Հեղինէն գորովանքով գիրկն առնելով երեխային ու համբոյրներ դրոշմելով նորա երեսին:

Դայեակը սկսեց հաւաքել սեղանի վրայից թէյի սարքը:

— Ձեր երկիւղը շատ հիմնաւոր է, ես ոչինչ չունեմ դորադէմ. բայց մի մոռանաք, Երկին Հեղինէ, որ Սահառունին ինքը կարող է գալ այստեղ կամ գոնէ կարող է կարճացնել իւր արտասահմանում մնալու ժամանակամիջոցը:

— Այ հէնց իմ վախս էլ այդ է. նա չը պէտք է գայ այստեղ, փճաբար պատասխանեց Հեղինէն: Նորա ինձ մօտ լինելը սաստիկ կը գրգռի Միխայիլ Պետրովիչին և այն ժամանակ, այն ժամանակ... նա կը խլի իմ ձեռքից իմ հրեշտակիս:

Երեխայից զրկելու մասին մտածելն անգամ բաւական էր, որ Հեղինէի դէմքը այլալուէր:

Ոչ, այդ չի լինիլ, երբէք չի լինիլ, սաստիկ յուզւած բացականչեց Հեղինէն և երեխային պինդ սեղմեց գրկումը:

Վերջապէս ինչու պէտք է Գէորգը այժմ՝ գայ Պետրովիչի, մի քիչ անցած աւելի հանգիստ էի, աւելցրեց նա: Նամակներին նայելով՝ նորա զբաղմունքները այժմ լաւ են գնում:

Թող նա մնայ Ծրանսիայում մինչև որ հասնի իւր նստատեղին ու յետոյ գնայ իւր հայրենիքը: Նա հասարակութեան համար անհրաժեշտ մարդ է. թող նա ազատ, առանց արգելքի իրագործի իւր նպատակները, ես չեմ ուզում խռնդոտ լինել:

— Բայց այդ զոհաբերութիւնը անտանելի տանջանքների աղբիւր կը լինի ձեզ համար:

— Է, Ալէքսանդր Վասիլիչ, ես աւելի վատ օրեր եմ քաշել: Ես

վճռել եմ ոչինչ չը յայտնել նորան: Ինչո՞ւ զուր տեղը վրդովեմ նորա հոգու անդորրութիւնը, երբ որ այժմ աւելի քան երբ և իցէ նորան պէտք է այդ անդորրութիւնը. թող նա հանգիստ գնայ իւր ճանապարհով: Նա էլ քիչ չի կուել կեանքի հետ, այժմ թող նա քաղի իւր բազմամեայ աշխատանքների պտուղը:

Հեղինէի ձայնը աւելի ու աւելի քիչ էր դողում և աւելի հաստատուն էր դառնում:

Ի՞նչ վսեմ անձնուրացութիւն է, որքա՛ն ճիշտ է հասկանում ճշմարիտ սիրոյ նշանակութիւնը, մտածեց Ասունին խորախորհուրդ հայեացքով նայելով Հեղինէին:

— Ես ու դուք, Ալէքսանդր Վասիլիւ, մեր խօսակցութեամբ աննկատելի կերպով քնացրեցինք Գէորգիկին: Օգնեցէք ինձ՝ տանեմ անկողին դնեմ նորան:

— Ձեր էլ քնելու ժամանակն է, տիկին Հեղինէ:

— Մի բան էի ուզում ասել ձեզ: Գրէք Գէորգին, որ ինձ գրած նամակները ձեր հասցեով ուղարկի:

— Շատ լաւ: Ել ուրիշ յանձնարարութիւն չունե՞ք:

— Ձէ, շնորհակալ եմ: Շուտ շուտ եկէք մեզ մօտ, խնդրեմ:

Ժամի տասնըմէկին մօտ կը լինէր, որ Ասունին դուրս եկաւ Հեղինէի մօտից:

Նա երկար ժամանակ զտնւում էր իւր այդ երեկոյեան լսածների քաղցր տպաւորութեան տակ:

XXIV

Միւս առաւօտեան Հեղինէն վերկացաւ շատ վաղ՝ աղօթարան բացելիս՝ և սուրճը խմելուց յետոյ գնաց պարտէզը:

Ինչ թւից դուրս էր եկիլ այս առաջին անգամն էր, որ նա լուրջ կերպով սկսեց մտածել իւր դրութեան մասին: Երբէք իւր կեանքում նա այնքան ուշի ուշով չէր քննել իւր ընդունակութիւնները ու աշխատել որոշել, թէ ինչ գործի համար է աւելի նախապատրաստուած ինքը: Բայց այդ հարցը շատ չը դժւարացրեց նորան. նա կանգ առաւ մանկավարժական գործունէութեան վրայ և վճռեց իրագործել իւր վաղուցւան բաղձանքը—գլխերօթիկ ուսումնարան

քանալ երեխաների համար: Նա մի քանի տարի տեսականորեն ուսումնասիրել էր մանկավարժութիւնը և զգում էր, որ ինքը կարող է բարեխղճօրէն պարապել մանուկների կրթութեամբ: Բացի այն, որ բաւականաչափ տեսական հմտութիւն ունէր, նա կարող էր լաւ մանկավարժ լինել և այն պատճառով, որ չափազանց սիրում էր երեխաներին, մեծ համբերութեամբ էր վերաբերւում նրանց ու գիտէր վարւել նրանց հետ:

Ճաշից յետոյ նա գնաց տիկին Ասատուրովայի մօտ և յայտնեց նրան իւր դիտաւորութիւնը: Տիկին Ասատուրովան պատկանում էր այն ասող-խօսող ու բարի հասակաւոր կանանց թւին, որոնք ամենքի գործերից տեղեկութիւն ունեն և ամենքի հետ վարւել գիտեն: Ամենքը մի տեսակ բնազդմամբ վստահաբար էին վերաբերւում նրան. նա ամենքի համար ունէր սիրալիր ժպիտ ու քաղցր խօսքեր:

— Խորհուրդ տւէք, Սոֆիա Եակովլւնա, ո՞ւմ դիմեմ որ օգնի ինձ. դուք այստեղ ամենքին ճանաչում էք:

— Ուրախութեամբ, հոգիս, դուք գիտէք, որ ես ձեռքիս եկածը ձեզնից եմ խնայիլ, բայց այստեղ բոլորը ձեզ ճանաչում են իբրեւ իշխան Նաիւուս քրոջ աղջկան և առանց իշխանուհու խնդրելուն ոչոք ձեզ չի օգնիլ:

— Ձէ, որ մեռնեմ ես իշխանուհուց բան չեմ խնդրիլ, նա ինձ տանից համարեա դուրս արեց... Ափսոս, քեռիւ այստեղ չէ:

— Միթէ կարծում էք, որ նորա այստեղ լինելը կարող էր մի որ և է նշանակութիւն ունենալ: Նորա տանը ամեն բանը կնոջ կամքովն է կատարւում. նա հէնց ինքն էլ իւր կնոջ կամքովն է նստում-վերկենում: Ձէ, սիրելիս, հէնց այսօր և եթ զնացէք իշխանուհու մօտ ու աշխատեցէք համոզել նրան, որ ձեզ օգնի. հօ անսիրտ գազան չէ, գուցէ համոզւի:

Հեղինէն լուռ ու մտախոհ լսում էր:

— Ձէ, չէ, ինդրելու մասին ինձ ոչինչ մի ասէք, այնպէս բացականչեց նա յանկարծ՝ կարծես մի բան խաթեց նրան:

Մի ուրիշ խորհուրդ տւէք ինձ:

Այ խօսեցէք մեր Ալէքսանդրի հետ: Նրեխերք, չը գիտէ՞ք, տա՛նն է բիձան թէ չէ:

Այ գալիս է, ուրախ-ուրախ աւելցրեց նա, դուրս նայելով պատուհանից, և փոքր աղջկանը ուղարկեց դուռը բաց անելու:

Ասունու հետ երկար խորհրդակցելուց յետոյ Հեղինէն վճռեց գնալ գիմնազիայի վերատեսչի մօտ, խնդրել օգնի իրան, որ գիշերօթիկ ուսումնարան բանալու թույլտուութիւն ստանալ:

Վերատեսուչը ծիծաղեց լսելով Հեղինէի խնդրքը և կասկածոտ հայեացք գցելով նորա վերայ, ասաց.

— Կարո՞ղ էք արդեօք այդ գործով պարապել, տիկին: Հօ այդ բանի մէջ ուրիշ... ինչպէս ասեմ, ուրիշ նպատակ չը կա՞յ:

Հեղինէն զարմանքից աչքերը չռեց:

— Ի՞նչ: Ես ձեզ չեմ հասկանում:

— Ես ուզում եմ ասել, տիկին, շողմքոր ձայնով սկսեց խօսել վերատեսուչը, լրբաբար նայելով Հեղինէի վրայ, որ շատ քիչ է պատահում, որ ձեզ այդ ջանքի ու գեղեցիկ կանայք իրանց նւիրեն այդպիսի ծանր ու ձանձրալի գործունէութեան:

— Ջահելութիւնն ու գեղեցկութիւնը ինչ կապ ունին մեր խօսակցութեան աւարկայի հետ. պարոն, ես ձեզ չեմ հասկանում, զայրացած պատասխանեց Հեղինէն:

Նա սաստիկ ճիգ գործ դրեց ու պահեց արտասուքը, որ քիչ էր մնում թափէր աչքերիցը:

Ժամանակի կորուստ եմ համարում այլ ևս ձեզ հետ խօսել այդ հարցի մասին, դողգոջուն ձայնով աւելցրեց Հեղինէն ու ուզում էր դուրս գալ, բայց վերատեսուչը կտրեց նորա ճանապարհը:

Հեղինէի աչքերը այնպիսի ազնիւ արտայայտութեամբ էին փայլում, նորա խօսքերը այնքան ինքնավստահ էին, որ վերատեսուչը ամաչեց:

— Մի բարկանաք, խնդրեմ, տիկին, իմ մոքովս անգամ անցնել չի կարող վիրաւորել ձեզ. նման կանանց: Ինչու պէտք է դուք կեանքներդ մաշէք աշխատանքով. բաւական է, որ մենք, թշուառներս, մատնւածք ենք այդ վիճակին: Լաւ է գիշերօթիկ ուսումնարան պահելը թողնէք խեղճ ալրիներին և պառաւած աղջիկներին, որոնք...

— Լռեցէք, պարոն, արհամարհաբար ընդհատեց նորա խօսքը Հեղինէն և դուրս գնաց:

Փողոցում դրսևի օդը մի քիչ զովացրեց Հեղինէի տաքացած գլուխը և նա միայն այն ժամանակ լաւ հասկացաւ վերատեսչի վարմունքի նշանակութիւնը և առաջին անգամ կեանքումը նորա սրտումը ծագեց թշնամական զգացմունք դէպի հասարակութիւնը:

Նրեկոյեան Հեղինէն սաստիկ յուզած պատմեց Ասունու, թէ ինչպէս ընդունեց իրան վերատեսուչը:

Թէև իւր դիրտաւորութիւնը իրագործելու միւս փորձերն էլ համոզեցին Հեղինէին, որ իւր աշխատանքը զուր է, բայց նա դեռ բոլորովին չէր յուսահատուում, յուսալով, որ կարող է մի որ և է ուսումնարանում ուսուցչուհու կամ վերակացուի պաշտօն ստանալ:

Մարտ ամիսը վերջանալու մօտ էր: Հեղինէի ձեռքին ոչինչ չէր մնացել այն հինգ հարիւր բոլբոլից, որ նա հետը բերել էր Թ.-սից: Նա սկսեց մոռծել, թէ արդեօք իւր ունեցածի մէջ չը կայ մի աւելորդ բան, որ կարելի լինէր ծախել: Դուրս եկաւ, որ ոչ մի աւելորդ բան չը կար: Նա յիշեց, որ իւր հետը վերցրել էր միայն ամենաանհրաժեշտ բաները և վճռեց, թէև այդ շատ ծանր էր նորա համար, ծախել մի քանի թանկագին զարդեր, որ մասամբ քեռու տւածն էր իբրև օժիտ, մասամբ էլ հանգուցեալ մօրիցն էր մնացել:

Ասատուրովան լաւ գնով ծախեց Հեղինէի զուքսեղէնը և Հեղինէն այդ փողովը մի կերպ գլուխը պահում էր:

Մինչ այդ, ապրիլ ամսի սկզբներում Պետտիգորսկ եկան Ս-ի օրիորդաց գիմնազիայի վերատեսչուհին ու տեսուչը:

Հեղինէն Ասատուրովայի միջոցով իմացաւ, որ նրանց պէտք է մի վարժուհի: Նախապէս խորհրդակցելով Ասունու հետ, նա վճռեց գնալ տեսչի մօտ:

Տեսուչը շատ սիրալիր կերպով ընդունեց Հեղինէին և խոստացաւ խօսել նորա խնդիրքի մասին վերատեսչուհու հետ:

Մի քանի օրից յետոյ Հեղինէն պէտք է գնար տեսչի մօտ վերջնական պատասխանը իմանալու համար:

Հեղինէն մի քիչ սիրտ առաւ: Հասաւ վերջասկէս նշանակած օրը, որին Հեղինէն սպասում էր անհամբեր սրտով:

Նա տենդային արագութեամբ գնում էր դէպի տեսչի սունը, ուր վերջնականապէս պէտք է վճռէր այն հարցը, թէ արդեօք կարող է նա հասարակութեան մէջ փոքր ի շատե՞ որոշ դիրք ունենալ:

որ, նրան նիւթական կողմից ապահովելով, միեւնոյն ժամանակ ան-
դորրութիւն ընծայէր նորա տանջւած հոգուն:

Տեսչի պատասխանը պէտք է վճռէր այդ հարցը: Հեղինէի վեր-
ջին յոյսը այդ պատասխանի վրայ էր:

Որքա՞ն սաստիկ պէտք է լինէր խեղճ կնոջ հիասթափութիւնը,
երբ որ տեսուչը յայտնեց նրան, որ ինքը ամեն կերպ աշխատել է
համոզել վերատեսչուհուն վարժուհի վարձել նրան, բայց նա բացէ
ի բաց մերժել է, չ'ուզենալով տեղ տալ գիմնագիայում, իւր կար-
ծիքով, կասկածելի համարմունքի աէր անձնաւորութեան:

Ես շատ աշխատեցի համոզել նրան, որ մարդաթող եղած կա-
նանց մէջ կարող են լինել այնպիսիները, որոնք արժանի են ամե-
նայն յարգանքի, բայց նա ոչինչ չի ուզում լսել ու շարունակ այն է
ասում, թէ դուք կ'արատաւորէք իւր խնամքին յանձնւած դպրոցի
անունը:

Հեղինէի գէմքը սաստիկ այլալուեց և նա ասաց տխուր ձայնով.

—Շատ շնորհակալ եմ այն բարութեան համար, որով դուք
վերաբերւեցիք ինձ: Հիասթափութիւնը ակորժելի լինել չի կարող,
բայց, ինչ արած, պէտք է հաշտւել տխուր իրականութեան հետ:

Տեսուչը խորին կարեկցութեան արտայայտութեամբ նայեց Հե-
ղինէին ու ասաց.

—Միայն մի միջոց կայ ձեր նպատակին հասնելու:

—Ի՞նչ միջոց:

—Դիմեցէք իշխանուհի Շակունուն: Հասարակութիւնը, մանա-
ւանդ կանանց հասարակութիւնը, արձագանքի նման ձայնակցում է
ազդեցիկ անձնաւորութիւններին:

—Զէ', երբէ'ք. այն էլ բաւական էր, ինչ որ ես նրանից լսեցի:

—Սակայն վերատեսչուհին շարունակ կրկնում է, թէ, եթէ ձեր
քեռակինը ձեզնից երես է թեքել, օտարները ևս առաւել այդպէս
կը վարւեն ձեզ հետ:

—Ինքն իւր Աստուածը, թող երես թեքի ինձանից:

Մնաք բարեւ, յուսահատ, սրտով արտասանեց Հեղինէն ու գնաց:
Նորա գեղեցիկ ծով— աչքերի սև թերթերունքների վրայ փալ-
փլում էին արտասուքի կաթիլներ, իսկ տփգոյն ու ցամաքած շրթ-
թունքները ջղաձգաբար դողդողում էին:

Խոնաւ, անձրեւային օր էր, բայց Հեղինէն, որ անզգայ էր դարձել դէպի արտաքին տպաւորութիւնները, գնաց թափառելու Պետիգորսկի շրջակայքի ամալի անկիւններում: Երկոյանում էր արդէն, երբ որ նա վերադարձաւ տուն և մի քիչ հանգստանալուց յետոյ դնաց Ասատուրովայի մօտ:

— Ախ, սիրելիս, չէք իմանում սիրտս ինչպէս է այրում, երբ որ տեսնում եմ ձեր անյաջողութիւնները, գրկելով նրան ասաց բաբեսիրտ Ասատուրովան:

Սիրտ արէք, գնացէք իշխանուհու մօտ, գուցէ մի բան դուրս գայ:

Հեղինէն վաղուց էր համոզւել, որ առանց քեռակնոջ օգնութեան չի կարող հասնել իւր նպատակին, բայց այնուամենայնիւ չէր կակղում և այժմ առաջին անգամը նա զգաց մի տեսակ վարանմունք:

— Հաւատացէք իմ փորձառութեանս, հոգիս, ես ձեզ վատ խորհուրդ չեմ տալ, համոզում էր Ասատուրովան: Բաւական է իշխանուհին մի խօսք ասի և բոլորը կը սկսեն ձեզ լաւ վերաբերել: Լսէք իմ խորհուրդին. ես իմ Աստածը, ճիշտ եմ ասում: Իշխանուհին շատ մեծ կապեր ունի, նրան այնպէս են վերաբերում, կարծես կիսաստածուհի լինի:

Վերջին խօսքերն արտասանելիս նա երեսը դարձրեց Ասունու կողմը, կարծես սպասելով, որ նա հաստատի իւր յայտնած կարծիքը:

Ասունին համաձայն էր Ասատուրովայի այդ կարծիքին, բայց դժւարանում էր հաւատալ, որ բարձր աշխարհին պատկանող մի կին յանձն առնէր հովանաւորել մարդաթող եղած կնոջ:

Այո, մտածեց Ասունին, խաբել մարդուն, վառնել նորա փողբը, օրը մի սիրեկան փոխել, հասարակութեան առաջ ամենազգելի փարիսեցիութիւն անել, այդ մեծամասնութեան կարծիքով, եթէ բոլորովին ազնիւ վարմունք էլ չէ, գոնէ յամենայն դէպս ներելի է: Իսկ թողնել մարդուն, թէկուզ ամենաչարգելի պատճառներով, — այդ աններելի յանցանք է և մարդաթող եղած կինը հասարակութեան աչքում արատաւորւած ու խայտառակւած անձնաւորութիւն է:

Այդ մտածմունքները այն աստիճան սարսափեցրին Ասունուն, որ նա ոչինչ չը կարողացաւ ասել:

Մի քանի օր շարունակ Հեղինէն մոտատանջութեան մէջ էր, — գնալ թէ չը գնալ քեռականջ մօտ: Մի/թէ նա կարո՞ղ էր գնալ նորից նորա մօտ ու խնդրել. — նորա ինքնասիրութիւնը բողբոջում էր դորա գէմ, նա չէր կարողանում մոռնալ իշխանուհու հասցրած վիրաւորանքը, բայց անհրաժեշտ էր գնալ, ուրիշ ճար չը կար, իսկ անձարութիւնը մարդու շատ բան անել կը տայ:

— Ախ, Կէորգիկ ջան, աչքիս լոյսը, բացականչեց նա բորբոքած դէմքով ընկնելով երեսայի անկողնի վրայ: Դու որ չը լինէիր, քո ապագայիդ հոգսը որ չը լինէր, որ երկինքը քանդէր գլխիս չէր կարող ինձ անել տալ այն ինչ որ դու ես անել տալիս... ես չէի խեղդիլ ինքնասիրութիւնս, չէի ստորանալ... օ՜Ֆ... հէրիք է...

Այդ ասելով, նա գերմարդկային ճիգ գործ դրեց իւր վրայ և համարեա վազելով գնաց դէպի Շակունու տունը, կարծես վատահու-թիւն չ'ունենալով իւր վճռականութեան վրայ: Շակունու տունը հասնելով, Հեղինէն խեղդեց իւր վիրաւորած ինքնասիրութիւնը և առանց յայտնելու ծառային, որ իմաց տայ իշխանուհուն իւր գալու մասին, խոհանոցի կողմիցը մօտաւ նեքսե ու ուղղակի գնաց քեռա-կնոջ ննջարանը:

Իշխանուհին նոր էր վերադարձել խնջոյքից:

Մի րոպէի չափ Հեղինէն կանգնած մնաց սենեակի մէջ տեղում, կարծես ազատ շուն: Քաշելու համար, բայց յետոյ շփոթութիւնը մի քիչ անցաւ և նա, մօտենալով քեռականջը, աղերսալից հայեացք գցեց նորա վրայ:

Իշխանուհին, որ միշտ հետաքրքրուում էր Հեղինէի գրութեամբ ու տեղեկութիւններ ունէր նորա գործերի մասին և վաղուց սպասում էր, որ նա կը գայ իւր մօտ (մեղադր) ասելու, նայեց նորա վրայ, սրտի խորքումը ուրախանալով, և նորա ձեռը բռնելով՝ քաղցրութեամբ ասաց.

— Աերջապէս խելքի եկար. եկել ես ինձ ուրախացնելու. վաղուց պէտք է այդպէս արած լինէիր: Լաւ է որ քո արածը դեռ չի հասել քեռուդ ականջին. խեղճը դարդամահ կը լինէր:

— Սխալուում էք, քեռակին. գալուս պատճառն ուրիշ է:

— Ի՞նչ... Զե՞ս զղջացել: Հապա ինչո՞ւ ես եկել:

— Քեռակին, թողէք բացատրեմ թէ բանն ինչու՞ն է. դուք

կը համոզէք, որ ես այնքան մեղաւոր չեմ, որքան ձեզ թւում է:
— Գիտեմ, գիտեմ, բանն ինչու՞ն է. Միխայիլ Պետրովիչը ինձ
գրել է, որ դու ուրիշի վրայ ես սիրահարուել:

— Մինուճար երեխայիս արեւը վկայ, որ այդ չէ եղել պատճառը:
Ախ, եթէ դուք ճանաչէիք իմ մարդուս, ինքնեքո՞ւ ինձ խորհուրդ
կը տայիք, որ թողնեմ նրան: Ես չեմ կարող, ես չը պէտք է արա-
տաւորեմ այն ազգանունը, որ կրում է իմ որդին, ազէկոուր ձայ-
նով բացականչեց Հեղինէն: Պատճառը ես ձեզ չեմ կարող յայտնել,
բայց հաւատացէք ինձ, քեռակին, որ զարհուրելի բան է, այնպիսի
զարհուրելի բան, որի հետ ես երբէք չեմ կարող հաշուել: Բայց,
եթէ դուք չը հաւատաք, ես ստիպւած կը լինեմ ամեն բան բաց
անել, բոլորը պատմել ձեզ: Յիշում էք Ուբարովին... Զէ', չէ', չեմ
ասիլ, ոչ ոքի չեմ ասիլ: Աւելի լաւ է...

Նորա ձայնը կտրուեց սաստիկ յուզմունքից:

Իշխանուհի Շակունին համարեա չէր լսում այդ կցկոուր խօս-
քերը, որ արտասանում էր Հեղինէն շարունակելով նայել նորա վրայ
նոյն աղերսալից հայեացքով:

— Մարդուն անհաւատարիմ լինելը մեծ մեղք է, ազդու կեր-
պով ասաց իշխանուհին. բայց մեյանչելուց յետոյ դու, իբրեւ կար-
գին կին, պէտք է ոչ թէ թողնէիր մարդուդ, այլ աշխատէիր խո-
նարհ վարմունքով մոռացնել տալ նրան արած յանցանքդ: Մէկ մոռ-
ածիր, թէ ինչ պէտք է լինի այժմ քո օրդ. գոնէ երեխայիդ խղճա-
տես, յետոյ կը զղջաս, բայց արդէն ուշ կը լինի:

Հեղինէն բացասաբար թափ տուեց գլուխը:

Մէկ լսիր, թէ խալիւր ինչ է խօսում քո մասին. ամօթիցս չեմ
կարողանում ոչ ոքի մօտ զնալ, զրգուած շարունակեց իշխանուհին:

Սկի կարող էր մի օրից մի օր մոքովս անցնել, որ մերոնցից
մէկն ու մէկը կը համաձայնէի մոռանալ Աստուծո՞ւ օրէնքն ու աշխար-
հիս ամօթը և պսակի սուրբ խորհուրդը կը քանդի:

— Քեռակին, ամուսնական կապը միայն այն ժամանակն է սուրբ,
երբ որ նա սրբազործւում է ամուսնացածների փոխադարձ յարգան-
քով, բայց երբ... Ախ, ինչ անեմ, որ չեմ կարող ասել. երանի
իմանայիք գոնէ հազարերորդ մասը այն բոլորի, որ իմ աչքում
նրան յարգանքի անարժան մարդ է դարձնում...

— Բաւական է գլխիցդ դուրս տաս, զայրացած գոռաց իշխանուհին:

— Աղաչում եմ, քեռակին, անօգնական մի թողէք ինձ, հնարաւորութիւն տւէք ինձ մի կտոր հաց վաստակել և ամենքից մերժւած դրութեան մէջ միտիթարւել իմ աշխատանքովս:

— Հա, լսել եմ՝ ուզում ես գիշերօթիկ ուսումնարան բանալ ճիշդ է:

Հեղինէն գլխով դրական նշան արեց:

— Բայց ո՞ր յիմարը կը յանձնի քեզ իւր աղջիկների կրթութիւնը, հա՛, հա՛, հա՛:

— Կատակ չես անում էլի՛, ուզում ես անպատճառ դատարարական դառնալ:

Հեղինէն այնքան զբաղւած էր իւր մտածմունքներով, որ շատ էլ չ՝առնւեց քեռակնով ծաղրից ու դարձեալ աղերսանքով ղիմեց նորան:

— Քեռակին ջան, հաւատացէք, որ ես ուրիշ տեսակ վարւել չէի կարող: Մի օր... դուք կ'իմանաք և կը սոսկաք:

Նա դէմքը ծածկեց ձեռներով ու խորը հոգոց քաշեց, բայց մի քիչ անցած յաղթեց յուսահատութեանը ու շարունակեց.

— Աղաչում եմ, օգնեցէք ինձ. սովորեցրէք, թէ ինչպէս հաւատացնեմ ծնողներին, որ ինձ յանձնւած երեխաներին աչքիս լոյսի պէս կը պահեմ, կը պահպանեմ: Օ՛հ, մի մերժէք վերջին խնդիրքը, որով ղիմում եմ ես ձեզ:

Իշխանուհին, ըստ երևոյթին, զգացւեց, բայց այդ միայն մի րոպէ տւեց: Հեղինէի աղաչանք-պաղատանքը ապարդիւն անցաւ:

Քեռակնով քարասիրտ անտարբերութիւնը ու անդրդւելի նախապաշարմունքը սաստիկ զարմացրեց Հեղինէին: Մինչդեռ նա անթարթ նայում էր քեռակնովը զարմանք ու զսպւած զայրոյթ արտայայտող հայեացքով, սա բազմոցի վրայ կիսապառկած աղիողորմ հառաչանքներ էր արձակում ու օ-դը-կողոնով թրջած թաշկինակը մէկ քունքերին էր դնում, մէկ քթին էր մօտեցնում:

— Օ՛հ, գլուխս տրաքում է, ջղերս այնպէս քայքայեցիր, որ մի քանի օր խելքս գլուխս չի գալ, — սկսեց խօսել նա վերջապէս:

Քո աղաչանքներին ես միայն մի պատասխան կարող եմ տալ.

խելքի եկ, դուրս հանի գլխիցդ ցնորքներդ. դրանից աւելի ես քեզ ոչինչ չեմ կարող ասել:

—Միայն ա՛յդ, դառը ծիծաղեց Հեղինէն, սակայն շնորհակալ եմ, ինձ այդ էլ շատ է:

Նա շատ էր աշխատում ազատութիւն չը տալ իւր զայրոյթին, բայց զայրոյթը այնքան սաստիկ էր, որ նա չը կարողացաւ իրան զսպել և, հազիւ պահելով արտասուքը, դողդոջուն ձայնով արտասանեց:

—Այժմ թոյլ տւէք ինձ, իշխանուհի, ասել ձեզ, որ ես բոլորովին համոզւեցի, որ դուք սիրտ չ'ունէք, այնպէս որ, կարող էք ապահով լինել, — էլ ես ձեզ չեմ անհանգստացնիլ որ և է խնդիրքով, մինչև անգամ եթէ մահաւան դուռն էլ հասնեմ: Մնաք բարև:

Այդ ասելով Հեղինէն կարմրատակած դէմքով դուրս վազեց սենեակից:

Մի քիչ անցած նա արդէն իւր տանն էր:

—Օ՛Ֆ, աչքիս լոյսը, ընկնելով երեխայի անկողնի վրայ բացականչեց նա մղկտահար սրտով: Ինչ մահացու մեղք է գործել խեղճ մայրիկդ, որ բոլորը նրանից փախչում են այնպէս, ինչպէս ժանտախտից:

Արտասուքը հեղեղի նման թափւեց նորա աչքերից: Նա փակւեց իւր սենեակում և մնաց այնտեղ մինչև միւս առաւօտ:

Տեսուչն ու Ասունին շատ էին աշխատում նորա համար մասնաւոր դասեր գտնել, բայց ի զուր:

Երկու ամիս Հեղինէն մնաց անգործ, դարդի ու անհանգստութեան մէջ անցնելով իւր օրերը:

Իշխանուհի Շակունին յոյսը չէր կորցնում. նա հաւատացած էր, որ վերջ ի վերջոյ Հեղինէն չի դիմանալ իւր անտանելի դուրսնալու ու անձնատուր կը լինի և այդպիսով կ'ազատի թէ իրան և թէ իւր ազգականներին խայտառակ բամբասանքներից:

Ապրիլ ամսւայ մի գեղեցիկ օր էր: Օգը լիքն էր բուրմունքով. բնութիւնը յարութիւն էր առնում: Հեղինէն գնաց զբօսնելու և քաղաքից դուրս գալով նորից հանգստանալու մի կանաչազարդ դարի

վրայ ու, հանելով Սահառունուց ստացած նամակը, սկսեց կարդալ: Տասերորդ անգամը կը լինէր, որ նա կարդում էր այդ նամակը և ամեն անգամ նոյն հրճանքով:

— Օ՛հ, սիրելի Գէորգ, արդեօք մէկ էլ կը տեսնեմ քո երեսդ, արտասանեց չեղինէն հազիւ լսելի ձայնով և վերջին համարը դրոշմելով նամակին՝ մտքի հետ ընկաւ:

— Այո, ես ուզում էի անպատճառ այստեղ ապրել, որովհետեւ այս քաղաքը սիրելի է իմ սրտին այն քաղցր յիշատակներով, որոնք կապւած են նորա հետ: Մի տարի առաջ այստեղ սիրտս լիքն էր սիրով, երջանկութեան յոյսով, մի տարի առաջ սիրտս հաշտ էր մարդկանց հետ, իսկ այժմ, ի՞նչ է բռնել այդ բոլորի տեղը իմ սրտում, — խորթութիւն ամբողջ աշխարհից, վիրաւորած ինքնասիրութիւն, զայրոյթ ու ատելութիւն դէպի մարդիկ, որոնցից արդարադատութիւն յուսալը, ինչպէս համոզւեցի, անմոռութիւն է: Զէ, էլ չեմ կարող տանել այդ, համարեայ բարձրաձայն արտասանեց չեղինէն ու խորը հոգոց քաշեց:

— Հազիւ հազ գտայ ձեզ, տիկին չեղինէ, լսեց նորա յետեւից Ասունու ձայնը: Մի ժամից աւել է փնտռում եմ ձեզ այս տեղարեւելք և արդէն սկսում էի համոզւել, որ զայնակը սխալ է ասել ձեր տեղը:

— Գիտէք ինչ կայ, Ալէքսանդր Վասիլիչ, ես պէտք է այս քաղաքից հեռանամ:

— Եւ շատ լաւ կ'անէք: Ուր որ էլ գնաք, ձեզ աւելի համակրութեամբ կը վերաբերեն քան այստեղ:

— Այսինքն եթէ գնամ՝ այնպիսի տեղ, ուր ինձ չեն ճանաչիլ իրրեւ իշխանուհի Նակունու ազգականի, դառն ծիծաղով ասաց չեղինէն:

Ուրեմն վճուած է, հէնց վաղը կ'երթամ այստեղից:

— Այդպէս շո՛ւտ, տխրեց Ասունին: Դուք որ գնաք մեր օրերը շատ տխուր կ'անցնեն:

— Ինձ համար աւելի տխուր կը լինի ձեզնից հեռու, բայց ինչ արած, Ալէքսանդր Վասիլիչ, պէտք է անջատունք իրարից: Խորհուրդ տւէք, ո՞ւր գնամ:

— Լաւ կ'անէիք եթէ գնայիք մօտակայ Գ. կ'քաղաքը, մի քիչ մաածելուց չետոյ պատասխանեց Ասունին, շատ խուլ անկիւն է,

բայց այն յարմարութիւնն ունի, որ եղբայրս այնտեղ ծառայում է։
Նա շատ լաւ տղայ է և ինչ որ ձեռքիցը գայ՝ կ'անի ձեզ համար։

— Շատ լաւ։ Ինչ համար միենոյնն է, ես թէկուզ աշխարհքի ծայրն էլ կը գնամ։ Այստեղ ես անբախտ եմ, լաւ է այնպիսի տեղ գնամ ապրելու, ուր ոչ ոք ինձ չի ճանաչում, ուր ոչ ոք երեսովս չի տալ իմ կարծեցեալ խայտառակ վարմունքս։

Երկու օր անցած Հեղինէն Ասունու հետ ճանապարհ ընկաւ։

— Շատ ճիշտ է ասել մի մատենագիր, մտածեց Հեղինէն կառքը նստելով, կեանքը կատակերգութիւն է մտածողի աչքում և ողբերգութիւն զգացողի համար։

XXV

Գ-կ հասնելով Հեղինէն ազատ շունչ քաշեց։ Ճաշից յետոյ նա սկսեց վազազացնել Ասունուն, որ իսկոյն գնան տուն փնտռելու։

— Հանգստացէք մի քիչ, տիկին Հեղինէ, մենք այնպէս էինք գալիս, կարծես գլուխ էինք փախցնում։

— Ինչ հանգստանալ, չէ՛, պէտք է շտապել, հիւրանոցում ապրելը շատ թանկ կը նստի։

Շատ ման գալուց յետոյ Հեղինէն վճռեց վարձել մի բնակարան, որ բաղկացած էր երկու սենեակից ու մի խոհանոցից և առջևից ունէր մի փոքրիկ պարտէզ։

Ասունին զարմացած նայեց Հեղինէին։

— Ինչ էք ասում, տիկին Հեղինէ, մի՞թէ կարելի է այստեղ ապրել։ Նայէք ի՞նչ ցած սենեակներ են. այստեղ մարդ կը խեղդւի։

— Իմ միջոցների տէրը սրանից լաւը չի կարող վարձել, Ալէքսանդր Վասիլիւ։ Դատարկ բան է, աղքատութեանը մարդ աւելի շուտ կարող է սովորել քան չար լեզուներին։

Ասունին տխուր կախ զցեց գլուխը։

Նա կարող էր օգնել Հեղինէին տալով նրան իւր ունեցածի մի մասը, բայց չէր համարձակուում ակնարկել անգամ նիւթական օգնութեան մասին, իմանալով, որ Հեղինէն այդ իբրև վիրաւորանք կ'ընդունի։

— Այո, տիկին Հեղինէ, կեանքը շատ անողոք կերպով է հալա-

ծուժ ձեզ. բայց գալք ինքներդ էք վերցրել ձեր վրայ այդ խաւը: Բաւական է ցանկանաք և ամեն բան կը փոխուի դէպի լաւը: Գէորգը երբէք չի ներիւ ինձ, որ...

—Մի շարունակէք, խնդրեմ, Ալէքսանդր Վասիլիչ: Ինձ համար այժմ աւելի քան երբ և իցէ թանկ է նորա անդորրութիւնը: Յուսալով, որ ապագան աւելի լաւ կը լինի, ես աշխատում եմ ուշադրութիւն չը դարձնել ներկայի վրայ: Վեց ամիս արդէն անցել է և, փառք Աստծու, մի կերպ ապրել ենք:

—Հա, բայց այդ վեց ամսում տարւայ նեղութիւն էք կրել, ուզեց ասել Ասունին, բայց լռեց:

Մի քիչ յետոյ նա վերջապէս սիրտ արեց առաջարկել Հեղինէին մի փոքրիկ գումար՝ տուն ու տեղ գնելու համար: Հեղինէն չէր ուզում վերցնել, բայց նա այնքան խնդրեց, համոզեց, որ վերջապէս վերցրեց:

—Ինչ չը համաձայնելու բան կալ այստեղ որ, տիկին Հեղինէ, դուք ինձ կը վերադարձնէք այս պարտքը երբ որ կարողանաք: Թէ՞, չէք ուզում, որ ձեր առաջին վաստակը ինձ հասնի:

Հեղինէն ժպտաց ու երախտագիտութեամբ սեղմեց նորա ձեռքը:

Մի քանի օրից յետոյ Ասունին ճանապարհ ընկաւ դէպի Պեա տիդորսկի: Հեղինէի հետ մնաս բարեւ անելիս նա խնդրեց նրան, որ իրան մէկ-մէկ նամակ դրի:

—Պէտք եղած ժամանակը ազատ կարող էք դիմել եղբորս: Նա ամեն կերպ ձեզ կ'օգնի: Մի նայէք, որ նա լուռ ու մռայլ մարդ է. իսկապէս նա շատ բարի սիրտ ունի:

—Զը գիտեմ ինչպէս պէտք է դուրս գամ ձեր ընտանիքի երախտիքի տակից:

—Դժբաղատարար մենք ոչինչ չենք արել ձեզ համար: Ե՛հ, մնաք բարեւ, տիկին Հեղինէ. խնդրեմ, չը մոռանաք, աւելցրեց նա մի քիչ դողդոջուն ձայնով, որ ձեզնից հարիւր վերստ հեռու կայ մի մարդ, որ, երբ որ ցանկանաք, իսկոյն ձեր մօտ կը լինի:

Պեատիգորսկում Ասունին զգաց, թէ որքան սաստիկ էր նորա համակրութիւնը դէպի Հեղինէն: Այժմ միայն նա լուրջ կերպով սկսեց մտածել այն հարցի մասին, թէ ինչն էր պատճառը, որ իւր սիրտը համարեա ամենևին չէր ցաւում, երբ որ նա հեռանում էր հայրենիքից,

անջատուում էր ընկերներից, զրկւում էր այն բոլորից, որին սովորել էր տարիների ընթացքում Թ-սում: Նա միայն այժմ յիշեց, որ Պետտիգորսկ գալուց յետոյ, նա, իւր սովորութեան հակառակ, չէր աշխատել ծանօթանալ սորա-նորա հետ, չէր աշխատել այնպէս անել, որ կեանքը ուրախ անցնի և մի քանի ամիս շարունակ զբաղւած էր եղել մոռածելով Հեղինէի անմխիթար դրութեան մասին ու բաւականացել էր միայն նորա բարեկամութեամբ:

— Մի՞թէ՞ նորա բարեկամութիւնը այդպիսի դիւթական ազդեցութիւն է ունեցել իմ վրայ: Մի՞թէ իմ մէջ կատարւած փոփոխութեան պատճառը այդ բարեկամութիւնն է: Մի՞թէ... զարմացած հարցնում էր ինքն իրան Ասունին և օրէցոր աւելի ու աւելի ծանր էր թւում նրան Հեղինէի բացակայութիւնը:

Բայց շուտով նա սկսեց նամակներ ստանալ Հեղինէից, որոնցով նա մխիթարական տեղեկութիւններ էր հաղորդում իւր մասին, և քիչ-քիչ սկսեց սովորել նորա բացակայութեանը, զւարճութիւնների յետևից ընկնել ու աւելի և աւելի տուել իւր սովորական կենցաղավարութեանը: Շատ շուտով ծանօթացաւ նա բոլորի հետ և Պետտիգորսկից սիրեցին նրան այնպէս ինչպէս սիրում էին Թ-սցիք: Նրան համարում էին անհրաժեշտ մարդ հրաւերքների, երեկոյթների ու զանազան *partie de plaisir*-ների համար, մի խօսքով նա շատ շուտով, ինչպէս ասում են, դարձաւ Պետտիգորսկի հասարակութեան հոգին:

Հեղինէն բաւական լաւ սարքւեց իւր փոքրիկ բնակարանում:

Երկու շաբաթ անցած Ասունու եղբայրը նորա համար մի քանի դաս գտաւ: Հեղինէն այնպէս էր պայմանաւորւել, որ այդ դասերի վրայ ընդամենը օրը երեք ժամ պէտք է գործ դնէր, բայց նա իրում էր նրանց համարեա ամբողջ առաւօտից մինչև ճաշ:

Նա հոգով սրտով փրւել էր այդ պարապմունքներին, սիրում էր աշակերտուհիներին իւր սիրող սրտի ամբողջ ոյժով. աշակերտուհիներն էլ սաստիկ սիրում էին նորան: Թէև այդ դասերի համար նա շատ աննշան նիւթական վարձատրութիւն էր ստանում, բայց գոհ էր, որովհետև այդ դասերը բարերար ներգործութիւն էին ունե-

նում նորա վրայ անդորրութիւն բերելով նորա խռոված հոգուն։
 Հեղինէի սիրտը առաջւայ պէս չէր ալէկոծւում. մի տեսակ
 հանդիսաւոր խաղաղութիւն էր տիրել նորա ազնիւ հոգուն։ Նորա
 միտքը էլ չէին պաշարում մաշիչ մտածմունքներ։ Նա այժմ սառ-
 նաւրտութեամբ գտնուում էր արածները, վերաստուգում էր իւր հա-
 յեացքները և քննում էր իւր անցեալը։ Նորա դէմքը ստացել էր մի
 տեսակ հանգիստ, մեղմ, թէև տանջանքի հետքերից ոչ բոլորովին
 զերծ արտայայտութիւն։

Երեկոյեանները նա նոյնպէս սիրով ինչպէս առաջ զբաղւում էր
 ընթերցանութեամբ։ Նա կարդում էր Ասունու ուղարկած գրքերը,
 աշխատելով գտնել նրանց մէջ պատասխաններ իւր մէջ ծագած հար-
 ցերին և պահանջներին։

Մի կիւրակէ Հեղինէն Ասունուց նամակ ստացաւ, որով նա
 շնորհաւորում էր փոքրիկ Գէորգի ծննդեան տօնը։

— Ուղարկում եմ իմ ծրարիս հետ, գրում էր նա նամակի
 վերջում, օրիորդ Թամարից ստացւած նամակն ու ծրարը։ Նա կար-
 ծում է, թէ դուք ղեռ այստեղ էք։ Համբուրում եմ սանիկին։

Այս, մոռացել էի, որ այսօր Գէորգիս ծնունդն է, ուրախ-ուրախ
 ասաց Հեղինէն ու ձայն տւեց դայեակին, Վանի, Նանի, Գէորգին
 բեր այստեղ։

— Հէս է բերում եմ, երեսը լւանամ՝ յետոյ։

Հեղինէն գնաց դայեակի հետ երեսալին լւացրեց ու հագցրեց։

— Գիտես, աննման, այսօր քո մի տարին լրացել է, դու այժմ
 արդէն մեծ մարդ ես, ասում էր Հեղինէն համբուրելով ու գուր-
 գուրելով երեսալին։

Այդ ժամանակ փոստատնից բերեցին երկու ծրար ու մի նամակ։
 Թամարի նամակն էր։

— Ինչ տեսակ մարդ եմ ես, մտածեց Հեղինէն նամակը ձեռքն
 առնելով, այս երրորդ նամակն է, որ նրանից ստանում եմ, իսկ ես
 նրան երկու տող էլ է չեմ գրել մինչև այժմ, կարծես բոլորովին
 մոռացել եմ, որ նա աշխարհիս երեսին գոյութիւն ունի։

Ասենք, այնպիսի գրութեան մէջ էի, որ խելք չէր մնացել
 զլիսումս, աշխատում էր արդարացնել նա ինքն իրան։

Թամարը մանրամասն նկարագրում էր, թէ ինչպէս ուրախ է

անցնում իրանց կեանքը Վլադիկաւկաղում, գովում էր իւր ազգականունհուն, որի տանը կենում էր, թւում էր նորա բարձր արժանաւորութիւնները, յափշտակած գրում էր, որ նորա շնորհիւ ինքը պսակում է մի պաշտօնաթող մայօրի հետ, որ շատ հիանալի մարդ է, և որ իրանք շուտով գնալու են ներքին Ռուսաստան:

Ես շատ ուրախ եմ, գրում էր նա, որ գնում ենք այստեղից. ինձ թւում է, որ այդ տեղափոխութեամբ ինձ համար նոր կեանք կը սկսւի և ես կը մոռանամ իմ անմխիթար անցեալը: Այդ անցեալի խաւարի մէջ, Հեղինէ ջան, միայն մի լուսաւոր կէտ է փայլում ինձ համար. այն կարճատեւ ժամանակը, երբ ես մտերմացայ քեզ հետ: Ծնորհաւորում եմ սիրուն Գէորգիկիս. տայ Աստուած, որ նա ողջաւորջ մեծանայ, կարգին մարդ դառնայ ու քեզ մխիթարի: Ուղարկում եմ մի քանի կտոր շոր, որ կարել եմ նորա սօնի համար: Այդ շորերը նրան հագցնելիս միշտ միտդ բեր, Հեղինէ ջան, քեզ անկեղծ սիրող Թամարին:

Նամակի վերջում նա հաղորդում էր, որ Ուբարովի ժառանգութիւնից եօթ հազար ռուբլի էր ստացել, և շատ խնդրում էր, որ Հեղինէն ընդունէր իրանից հինգ հարիւր ռուբլի:

— Եթէ դու, ուզենալով ինձ վիրաւորել, չ'ընդունես այդ ընծան, ես կ'ընծայեմ իմ Գէորգիկիս. դու իրաւունք չ'ունես արգելել ինձ ընծայ տալ իմ եղբորորդուս: Ախ, երանի այս ընկերի ձեզ մօտ լինելի ու համբուրելի իմ աննման Գէորգիկին: Ուղարկիր ինձ, խնդրեմ, նորա պատկերը: Քո Թամար:

Մինչդեռ Հեղինէն կարգում էր նամակը, դայիակը անհամբեր սրտով բաց էր անում արկղները: Մէկի մէջ խաղալիքներ էին, — այդ Ասունին էր ուղարկել, միւսի մէջ Թամարի ուղարկած շորերն էին:

Դայեակը սաստիկ ուրախանում էր և ամեն բան մէկ-մէկ ցոյց էր տալիս երեխային: Երեխան ծիծաղում էր և ուրախ-ուրախ մեկնում էր առաջ իւր թխիկ ձեռները: Մայրը հեռւից նայում էր ու հրճում:

— Ուրիշների միտքն է եղել, որ այսօր քո ծնունդդ է, իսկ մայրիկդ մոռացել է, հոգոց հանելով ասաց նա ու գիրկն առնելով երեխային սկսեց պաշպել:

— Գիտես ինչ կայ, Նանի, մի քիչ հանգստանալով դիմեց նա

բախակին, ես էլ եմ ուզում տօնել այս օրը: Կ'երթաս առաջ խմորեղէն ու քաղցրեղէն կ'առնես, յետոյ կը գնաս իմ աշակերտահիների տները, ծնողներին կը խնդրես, որ երեխաներին վերցնեն գան ինձ մօտ թէյի, չը մոռանաս կանչել Աստու եղբորը, Նիկոլայ Վափլիշին:

— Ձեմ մոռանալ, հոգիս, այս ըոպէիս կ'երթամ: Տեսնում ես, մեզ չեն մոռացել, ընծաներ են ուղարկում, Աստու իրանց սրտով տայ իրանց:

— Իսկ այս փողով, Նանի, քեզ համար շորեր առ:

— Շնորհակալ եմ, հոգիս, ինձ պէս պառաւին ինչ կը սաղի զարդարել:

Երեկոյեան մի քանի լապտերներով լուսաւորած փոքրիկ պարտէզում Հեղինէի հիւրերը ուրախ ժամանակ էին անցկացնում, — մեծերը թուղթ էին խաղում, իսկ փոքրները Հեղինէի հետ ղրաղւած էին զանազան զւարճալի խաղերով:

Թամարից ստացած փողի մեծ մասը Հեղինէն բաժանեց իւր պարտատէրին, իսկ մնացածը պահեց աւ օրւայ համար ու աւելի հանգիստ սրտով շարունակեց պարապել իւր գործով:

Այգպէս անցաւ երկու ամիս նորա Գ-ի գալու օրից:

Նա կարծես բոլորովին հանգստացել էր այն բազմաթիւ անարգանքներից յետոյ, որոնց ենթարկւել էր Պետտիգորսկում, որ յանկարծ նամակ ստացաւ մարդուց:

Նամակի սպառնական եղանակը այնքան սաստիկ ազդեց նորա վրայ, որ նա հիւանդացաւ:

Գալով Ամիրանովին պէտք է ասենք, որ նա եօթ ամսւայ ընթացքում բոլորովին համոզւեց, որ քաղցրութեամբ չի կարող յորդորել կնոջ հաշտւելու, և, լսելով Եփեմիայի մշտական խորհուրդին, վճռեց բռնութեամբ յետ բերել նորան իւր մօտ, մանաւանդ որ իշխանուհի Շակունին էլ պահանջում էր, որ նա խիստ միջոցներ գործ դնի կնոջ դէմ:

Օգոստոս ամսին Ամիրանովը, իշխանուհու աւած խորհրդի համաձայն, արդէն Պետտիգորսկում էր: Այդտեղից էլ նա մի խիստ ու

գճռական նամակ գրեց Հեղինէին, սպառնալով, որ եթէ նա գարձեալ յամառի, երեխային կը խլի ձեռքիցը:

Հեղինէն որ կարդաց այդ նամակը ու իմացաւ, թէ մարդը Պետտիգորսկումն է ու հաւանականօրէն իշխանուհու հետ խօսքը մէկ է արել, բոլորովին համոզեց, որ նա կարող է իրագործել իւր սպառնալիքը, և սաստիկ յուսահատուեց: Նորից սկսեցին նորա համար դառն ու խռովայուզ օրեր:

Նիկոլայ Ասունին գրեց այդ եղբօրը: Ալէքսանդրը իսկոյն գնաց Ամիրանովի մօտ ու յայտնեց, որ, ինչպէս իրան գրում են, Հեղինէն սաստիկ հիւանդ է, և աշխատեց համոզել նորան, որ շատ վտանգաւոր է այդպիսի դրութեան մէջ անհանգիստ անել Հեղինէին:

Ասունու աշխատանքը զուր չ'անցաւ, Ամիրանովը համաձայնեց չը խլել Հեղինէից երեխային:

Քիչ ժամանակից յետոյ նա հասկացաւ, թէ որքան անհեթեթ էին իւր սպառնալիքները, և հեռացաւ գնաց Թ-ս:

Այդպիսով նա բոլորովին յոյսը կորցրեց կնոջ հետ հաշտելու, բայց դեռ չէր կարողանում սովորել այն մոգին, որ ընդ միշտ զըրկւում է կնոջից ու երեխայից, և սաստիկ դարպի մէջ էր:

— Շատերը կարծում էին, թէ Հեղինէի հետ կը վերադառնամ, այժմ ինչ պէտք է ասեմ նրանց, մտածում էր նա մօտենալով Թ-սին:

Սիրտը զայրոյթից ուզում էր տրաքել, վիրաւորւած ինքնասիրութիւնը տանջում էր նորան:

— Չհաննա՛մը իրանք էլ, իրանց կարծիքն էլ, ինչ ուզում են թող կարծեն, ինձ ի՛նչ. նրանց նորութիւններ է պէտք, բաւական է մի նոր բան պատահի, նրանք այս կը մոռանան ու նորի ցտուկիցը կ'ընկնեն, աշխատում էր ինքն իրան հանգստացնել Ամիրանովը. բայց իսկոյն նորա մտքովն անցնում էր,— իսկ ե՞ս, կարող եմ արդեօք մոռանալ... Օ՛խ, Սահառունի, Թամար, թէ ձեր դատաստանը ինձ կը տալին...

Մարդ կը սարսափէր, եթէ նայէր Ամիրանովի դէմքին այդպիսի բոպէներին, երբ նա, կարծես մոռացած իւր բարձր հասարակական դիրքը, փայլուն ասպարէզը և ամբողջ աշխարհը, բոլորովին անձնատուր էր լինում ատելութեան ու վրէժխնդրութեան զգացմունքներին:

Բռունցքները ջղաձգաբար կծկւում էին, աչքերում փայլում էր կառաղութեան կրակ, կարծես նա պատրաստւում էր պառաւ-պա-սառ անել Սահաւունուն ու Թամարին:

Ագգայիսի գրգռւած դրութիւնից յետոյ Ամիրանովի վրայ մի տեսակ թուլութիւն էր գալիս. նա ժամերով լուռ նստում էր բազկաթոռի մէջ ու աշխատում էր համոզել ինքն իրան, որ պէտք է համբերութեամբ սպասել մինչև այն ժամանակ, որ ամեն բան ինքն իրան մոռացւի:

(Վերջը միւս համարում)